նախադասութեանց վերայ։ Նորանցից էլ յետոյ սկսվում են Որակական, Պատճառական, Պայմանական, Տեղատուական, Տեղական Ժամանակական Համեմատական, Բաղխիւսական ևն. Նախադասութիւնները. որոնք իւրեանց երկարաձիգ բաղմամասնեայ և անպէտք կանոններովը շատ նմանում են մեր լուսահոգի Զամչեանի «գիտելի է երբեմն» երին. իսկ իրօք ոչ այլ ինչ են, եթէ ոչ նախադրութեան մակբայի և շաղկապի տեսակներն ու բաժանմունքը. որոնք ոչ թէ այսպէս պէտք էր նախադասութեան ձևի տակ ընդլայնել և ճապաղել, այլ բաւական էր միայն իւրաքանչիւրի համար (օրինակ մակբայի) մի համառօտ ու պարզ կանոն աւանդել թէ ինչ դեր և պաշտօն է վարում նախադասութեան մէջ. և ահա վերջացաւ. և այսպիսով այսքան խառնակուատակ բաժանմունքների փոխարէն մէք կունենայինք երկու — երեք ամփոփ կանոններ իւրեանց տեղերումը։

Ի վերջոյ՝ ահա և մի երկու խօսք էլ թերևս ոչ աւելորդ նոյն քերականութեան մէջ անզգուշութեամբ գործածուած բառերի մասին, ի՛նչպէս են.

Դարձեալ, որ պէտք է լինէր դարձեալ. աշնեալ, (աշնան). ինքն՝ երեսից իսպառ ընկած. այժմու գործածականն — իւր. անվարձ չի մնալ, որ պիտի լինէր չի մնայ — դիմաւոր բայ. շրջել՝ ոչ սեռականի մօտ գործածուելը շատ անտեղի է՝ իսկ քանի որ աշխարհարարը չունի պարտական հոլով, աւելի լաւ է ասել չորս կողմը։ «Վերնամեր որ անդրեանց և զոգոյնս քեզանդգնել զայս երդմնի ձեր, զբացատականը քոյ և զոգոյնս բայերի վերայ դրուելով, հակառակ իմաստ է յայտնում. եթէ անձրև չգայ և շտիպուի մարդ գիշերը խրճթում անցկացնել, ուրեմն ինչ վախ կայ մէջ տեղ։ Վերջացնելով մեր այս մի քանի խոսքը չեմք կարող չ յայտնել որ այս անգամ մենք շատ հարևանցի կերպով անցանք Պ. Պարսամեանցի Քերականութեան վերայով. գուցէ յաջողի մի ուրիշ անգամ՝ նոր իսկ մեզ կամ՝ մի ուրիշ բանասիրի ընդարձակ նկատմանն առնուլ յիշեալ երկասիրութիւնը։

ԱՐԻՍՏԱԿԷՍ Վ. ՍԵԴՐԱԿԵԱՆ.

ԵՐԿԱՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ.

(Շարունակութիւն)

Գ. Զորանալի երկիրն երբեմն շատ ցած է քան շրջակայ երկիրս, և կազմէ մի խորութիւն առանց ջրոյ դառ ի թափի. յայնժամ պէտք է կամ ջուրն բարձրացուցանել ջրաբաշխական մեքենայից օգնութեամբ՝ կամ կորուսանել զայն՝ երկրի խոնարհագոյն կարգաց մէջ, որք գնան պարզ ջրհորոց օգնութեամբն ըստ գրութեան անթափանցական քարանց կարգին, կամ ընթացք գտանելով դէպ ի աղտեղի ջրոց փոսս, կամ այլ անուամբ (boif, tulo) ասացեալ՝ որք են տեսակք՝ ջուրց համար շինուած հորոց, երկրի անթափանցական կարգին կից։

Այն պարագայից մէջ՝ ուր այսոցիկ հընարից ո՛չ մին և ո՛չ միւսն կարելի է գործադրել, այդ ջրերն հնարաւոր է յօդուտ ի կիր արկանել լճակի կերպիւ։

Գ. Թմբի, սալյարկի, հասկաց և ձորապատուարի օգնականութեամբ գուն գործեն շահիլ առուակաց ջրով սովորաբար զբաղված երկիրն, և մշակել զայն յորդութեան ջուրց և հեղեղաց արգելս դնելով. ջրոց ներքսագոյն հոսումն՝ որպիսիք են ջրմուղաց և խրամոց ջուրքն, արգելուն սահանօք (բանտ)՝ կամ լաւ ևս՝ ջրհան գործարանաւ։ Եթէ խոնաւութեան չափազանցութիւնն անզգաւ ի վայր առուակաց յորդութեան ջուրցն թափանցանց մտանելոյն արգասիքն է՝ լաւագոյն է յարդարել զընթացս նոցա. կամ սակաւ առ սակաւ թիւրելով նորա ընթացքն դէպ ի մի այլ ջրմուղ՝ որոյ հին փոսքն ընդունին զջուրն, կամ նոցա ափանց մանուածա-

պատ շրջանն հատանելով։ Ուռի կամ կաղամախի պարզ աղուրիքն՝ (դալամայ) զորս հիւսեն երկարատև վանդակ կազմելոյ նմանութեամբ, և զոր կորացուցանեն և ջրոց եզերաց վերայ հաստատեն, ունին թմբոց բաւականաբար երաշխաւորութիւն և նոյնպէս կարեն զայնս բարձրացուցանել առուակաց եզերաց վերայ՝ հողոյ կոյտս բրելով, որք կարեն ունիլ թմբոց տեղիս։ Յամաքութեան աշխատանաց դարմանն և պահպանութիւնն պահանջին խճահան գործոյ և մարդոյ ձեռաց մաքրութիւնն, մանդաղաւ հունձս, քաղհանութիւնս, դալարագեղ կոշտովք (ճիմ) զարդարումն, անկագործութիւն, տարածումն փխրութի, ցանկ հիւսուածոյ, հող, և կոպիճ ևն։ Կարեն օգուտ քաղել ջրից, գործարանաց ծառայութեամբն, ջրելով՝ նաւագնացութեամբ, ըմպելեաց բազմապատկութեամբն, որմոյ զառ ի թափ ծածկելովն, ազատափն անկագործութեամբ և ճարակախոտով։ Յամաքեալ երկիրն ինքնին վճարէ իւր արած յառաջադիմութիւն՝ եթէ տան նմա պարարտութիւն, և եթէ վստահանան և հաւատան զբոյսս պատշաճեալս այն վիճակին՝ մանաւանդ եթէ սոյն երկրի յատուկ բնութեան պատշաճին բոյսքն։

Ծովեզերեայ ճախճախուտ երկիրն կարևորութիւն ունի քաղցր ջրով ողողման և լուացման. ցամաքութենէն զկնի՝ մշակութեան ընդունակ լինելոյ առթիւ։

Ռաքիբ-ԷՆ Էրիքի. — Պարտէզք, այգեստանեայք, և լեռնային երկիրն ներկայացուցանեն այն տեսլոյ նմանութիւնս՝ որ այլուստ մեծ ծախուք փոխադրուած հողոյ զօրութեամբ միայն ընդունակ են եղած պտղաբերութեան, առընթեր այս օրինակ ազդեցութեան՝ որ ճանաչուած է «մրգաբաժ», անուան տակ. տեղի ունի և այն արարքն՝ որով սառրին երկրի թմբապատ և աղի դաշտավայրի մէջ՝ որ սովորաբար կրէ մի չափազանց խոնաւութիւն, փորեն փոսոց բազմութիւնս որոց հողն ածեն միւս չփորած տեղերի վերայ. բնական կոյան հողոյ և աւազոյ ևս կազմեն պտղաբեր կարգս, զորս որոնեն և տարբեր արարից ի կազմութիւնն հրաւիրեն։

Ջանէն յոպոկն. — Մի երկրի տակի հողն հանելն՝ այն երկրի հողոյ բարձրութիւնն առաւելուլ ասել է՝ որոյ վերայ թափեն յատակի հողն. ուր արմատոց զարգացումն յաջողիլն յետոյ՝ նա և զարգացուցանէ զցողունն. և հետևաբար զամենայն անկոց հաստատութիւնն։ Խրածոյ հողն հերկելոց խորին և վերի դրիցն կցուելով՝ երկրի մաքրութեանն յոյժ օգնական լինի։ Մոլեխոտից սերմունքն՝ որք բուսանին սաստիկ հաստատութեամբ իւրեանց արմատոց խոր և երկայն ձգմամբն, մեծ խորութեամբ թաղուելով հանած հողոյ տակին՝ ոչնչանան. յատակէն հանած չափաւոր հողք օգտակար են հողոյ տեառն, իբրև առատ աղբք. եթէ չինայէ կարևոր աշխատանս երկրի փոքրիկ մասն կրկին կարգին սերտիւ խառնելոյ համար. և բարւոք օդոյ տալոյ համար այն հողերն՝ որ նորոգապէս հարեալ են գործիւք, և երկրի բոլոր խորութիւնն մշակական վիճակի մէջ պահելոյ համար։ Յատակի հողն նշանաւոր չէ, եթէ սառրին հողն բնականաբար ընդունակութիւն չունի, եթէ բուսական հողն է շատ նուրբ, և եթէ մշակութեան կարգաւ կազմուած է կարծ-

բագոյն կարգի գծի տակ, որ արգելու արգասաւոր գոյութիւնս և խոնաւութեան հոսումն:

Վաղ հանեալ բոյսքն և խաւարծիք մասնաւորապէս պատշաճին յատակէն հաճած հողոյն, որոց աղդեցութիւնն կատարի կամ ձեռամբ մարդոյն, կամ արօրիւ և կամ երկոքումբք միանդամայն. երբեմն մի և նոյն գծի վերայ անցուցանեն երկու արօր կարգաւ, և երբեմն կրկին անցուցանեն մի և նոյնն. կամ լաւ ևս ի կիր արկանեն մին. որ կրէ երկու կամ շատ խոփս զանազան բարձրութեամբ:

Լաւ-ու-ին հողոյ. — Կէրարիս-ին հրոյ: — Լրթէ բոյսք երկրի մակերևութի վերայ կաղմեն դալարեաց արտաքին կերպարանս՝ քաղեն զայն բարակ կանաչեղէն սփռացն, և տեղին այրեն յամրագնաց հրով, որով ի նմա թաղեն զարգասիս: Դալարեաց յօշման և բառնալոյն ծառայող գործիք են երկաթի բահ, սահմանուած երեք անկիւնի մի սուր ծայրիւ ուղիղ և աղեղնաւոր թեղանիք և մեծ բահ և մանգաղ խոզանի. որք տեսակ են կրկնակոր և լայն երկաթի բահից, կամ լաւ ևս վերջապէս մի քանի տափարակ յոյժ սրածայր և երկայնախոփ արօրք. երբեմն հերկելով և տափելով խաչաձև՝ յերկրէ որոշեն արմատներն, և առանձինն այրեն, այս երկու դիպաց մէջ արօրքն մասնաւորապէս կրեն զանուն բահահերկութեան: Հուրն կարելի է գործադրել բուսազուրկ երկրի վերայ, կաւն ի կիր շրջելոյ օրինակաւ, կամ միայն բուսոց վերայ, որպէս երբեմն հանդիպի այրել հաւամրգիս (սիւփիւրկէ օթու) և խոզանս, այսպէս և երբեմն հանդիպի և անխնամ թողաց երկրին. սմանապէս ևս հուրն ի կիր արկանի կիզահողոյ բովուց մէջ. վերջապէս ի գործ դնեն զհուր այն ամենայն երկրի վերայ. ուր առատ են գործարանաւոր նիւթքն և որք մեղանչեն այնոցիկ նիւթոց թէ թթուութեամբ և թէ անլուծութեամբն, և թէ չափազանց կաուստ լինելովն: Օ. առաջինն խաչարեր տունկք (որոց ծաղկանց տերևքն խաչաձև կարգեալ են) մանաւանդ շաղգամ, յեսոյ գեանախնծորն, ազգ ազգ ցորենոյ, և խաւարծիք գերամեծարութեամբ բահիւ փորաց երկրի մէջ մշակին. քանզի բահիւ փորուածն է երկրի գործունեութեան ազդու գրգռումն:

Կէրարիս-ին ջերմ-ին: — Լրբ մշակութիւնն պաշտօն ունի լայնութեան կամ ընդարձակութեան, բարձրութեան, արտադրութեան և երկրի վիճակի մէջ՝ որք ապահովին նմա իւր կարևոր արեգակնային ջերմութեան ասպիճանն, ոչինչ կարէ առաւել առնել, բայց միայն ջերմութեան բաղխումն թեթևութեամբ չափաւորել ապաստանաց միջոցաւ, իսկ բանն արհեստական ջերմութեան գալով՝ անկարելի է նորան դիմել, քանզի պարտիզպանք ընդհակառակն՝ բացի տեղւոյ ընտրութեան և արտադրութեան մին ամենամեծ դիւրութիւն վայելմանէն՝ 1° իւրեանց երկիրն կարեն կարգել. որպէս զի նովաւ ածուշեղ առորմով և զառիթափ խոնարհեցուցանել, որպէս զի նովաւ երկիրն կարող լիցի արեգական ճառագայթս վայելել. 2° կարեն երկրի կարգն կաղմել ջերմ, կամ գաղջ՝ երկրի հարբաչափ գործեաւն. նոցա մէջ գործադրելով կովուց կամ ձիոց աղբս, տերևս, ի կիր արկանի կիզահողոյ բովուց մէջ. վերջապէս ի գործ դնեն զհուր այն ամենայն երկրի վերայ. ուր առատ են գործարանաւոր նիւթքն և որք մեղանչեն այնոցիկ նիւթոց թէ թթուութեամբ և թէ անլուծութեամբն, և թէ չափազանց կաուստ լինելովն: Օ. առաջինն խաչարեր տունկք (որոց ծաղկանց տերևքն խաչաձև կարգեալ են) մանաւանդ շաղգամ, յեսոյ գեանախնծորն, ազգ ազգ ցորենոյ, և խաւարծիք գերամեծարութեամբ բահիւ փորաց երկրի մէջ մշակին. քանզի բահիւ փորուածն է երկրի գործունեութեան ազդու գրգռումն:

Կէրարիս-ին ջերմ-ին: — Լրբ մշակութիւնն պաշտօն ունի լայնութեան կամ ընդարձակութեան, բարձրութեան, արտադրութեան և երկրի վիճակի մէջ՝ որք ապահովին նմա իւր կարևոր արեգակնային ջերմութեան ասպիճանն, ոչինչ կարէ առաւել առնել, բայց միայն ջերմութեան բաղխումն թեթևութեամբ չափաւորել ապաստանաց միջոցաւ, իսկ բանն արհեստական ջերմութեան գալով՝ անկարելի է նորան դիմել, քանզի պարտիզպանք ընդհակառակն՝ բացի տեղւոյ ընտրութեան և արտադրութեան մին ամենամեծ դիւրութիւն վայելմանէն՝ 1° իւրեանց երկիրն կարեն կարգել. որպէս զի նովաւ ածուշեղ առորմով և զառիթափ խոնարհեցուցանել, որպէս զի նովաւ երկիրն կարող լիցի արեգական ճառագայթս վայելել. 2° կարեն երկրի կարգն կաղմել ջերմ, կամ գաղջ՝ երկրի հարբաչափ գործեաւն. նոցա մէջ գործադրելով կովուց կամ ձիոց աղբս, տերևս, ի կիր արկ-

կեալ աւազս և այլ դոյացութիւնս, որք իւրեանց եռացմամբն պատճառեն նուազ կամ առաւել ջերմութիւն, և որոց ազդեցութիւնն տեւէ կրկին ջերմութեամբ, այսինքն երկրի կարգի ծոցն վերսային աստելով ձիոյ գոմից դուրս բերած, ազբս՝ երկրի զարգացման կարևորութեան չափով. 3° կարեն վերսային ամրացուցանել երկրի մակերևոյթն ածխափոշեաւ, ազբահողով և այլ այնպիսի գոյացութեամբք՝ որք իւրեանց բաժանմամբն և իւրեանց սև և նսեմ գունիւն բարձրատիճան ժառանգեն արեգական ճառագայթքս ծծելոյ կարողութիւն։

(Շարունակի)

Թ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՄԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ՀԵՄԱՐԱՆ.

Հ'եմարանի կիսոյ մասին այրման գուժն ընդ ամենայն տեղ և համայն ողջամիտ Հայոց սրտից վերայ տխուր տպաւորութիւն և տրտմութիւն ներգործելով՝ բայց ոչ վհատութիւն, շատ տեղիքն անընդհատ մխիթարական թուղթեր կուղղուին առ Վ. Հ. Հայրապետ մեր՝ և կիսատանան միանգամայն՝ զի ինքեանք պատրաստ են ինչպէս միշտ և հանապազ եղած են ըստ ամենայնի՝ թէ նիւթապէս և թէ բարոյապէս օգնելոյ ամեն ազգօգուտ և բարեմիտ նպատակաց և ձեռնարկութեանց, նոյնպէս այս անգամ նպաստելոյ Հ'եմարանի այրեցեալ մասին վերաշինութեան, և արդէն մի քանի կողմեր ստորագրութիւններ բացուած են (ի Բագու, Ամատրախան և Աստրախանէն Վոլոռուն և Ռ. ոբլ. Յովսէփ աւագ Քահանայ Բունիաթեանց՝ բաց ի իւր նուէրէն՝ յայլոց ևս առձեռն հաւաքելով՝ մատուցած է Վ. Հ. Հայրապետին։

Թողլով զի՝ ի ժամանակին նուիրատուաց անուանքը և արդիւնքը կհրատարակուին, ուստ սակաւ մխիթարութեամբ կտեսնեմք և կուրախանամք ի սիրտ և ի հոգի՝ որ մեր սիրելի ազգայինք երբեք անտարբեր մնացած չեն Ազգի և Եկեղեցոյ ներկայի և ապագային համար ձեռնարկուած և ձեռնարկուելիք բարեմիտ նպատակաց և հաստատութեանց նկատմամբ, և ահա այսպէս՝ երբ մի Ազգի և Եկեղեցոյ մէջ համամիտ և ներդաշնակ անկեղծ սէր և ողջամիտ ջանք կտիրէ, ի դրբանց դժոխոց անյաղթահարելի կմնան և երջանիկ կլինին։

Հայեր, քաջ ճանաչեմք մեր հարազատ օգուտները և կարօտութիւնքը, և միշտ գործեմք առանց թուլանալոյ և վհատելոյ

Այս առթիւ կծանուցանեմք նաև՝ զի Հ'եմարանի վերաշինութեան աշխատութիւնք մեծ փութով յառաջ կտարուին։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՑՍ

(Շարունակութիւն և վերջ)

Ի ՎԻՃԱԿԻՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՅ.

	Ռ.	Կ.
Որդնաւեցի Բաղտասար տէր Բաղտասարեանց. . . .	4	
Նոյն գիւղացի Կարապետ Թումասեան.	2	
,, Աղլահվերտի Մալխասեան. .	1	
,, Յոհաննէս Զաքարեան. . .	1	
,, Յոհաննէս Սարգսեան. . .	1	